

## ԳԱՌՆԻՒԻ ՀՈՒՆԱՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



ատմական մեծ արժեք ներկայացնող վերջին գյուղաքրից մեկը—այդ Գառնիոս վերջերս գտնված հունարեն արձանագրությունն է: Նա մեզ հասնէ է նախաքրիստոնեական շրջանից և բացառիկ արժեք ունի հայ ժողովրդի պատմության համար նորագյուղագրությունը մեծ շափով օդնում է մեզ պարզեցնի Գառնիոսի տաճարի կառոցման հետ կապված մի շարք առեղծվածներ: Նա հնարավորությունն է տալիս մեզ նաև թնդնդու Մովսես Խորենացոց Գառնիոսի մասին հաղորդած տեղեկություններից արժանահավատությունը: Տրդատի մի արձանագրությունը, ինչպես հայտնի է, գտնվել է 1908 թիվն բանասեր Գարեգին կաթողիկոս Հովհանիսի կողմից: (Այդ արձանագրությունն ուսումնասիրել և հրատարակել է Մ. Ռուսովի 1911 թ. իր «Ապարանակաց հայության պատմություն» մեջ): Գառնիոս Կորես գտնված արձանագրությունը նույն թագավորից մեզ հասած երկրորդ արձանագրությունն է հանդիսանում:

Գառնիոսի այս արձանագրության գյուղը կատարվել է պատմական ձևով:

1945 թվի հունիսի կեսերին ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը գյուղատնտես Ցողովի Դավթյանի հետ միասին Գառնիոսի գյուղի գերեզմանատանը պատելիս նկատում են այստեղ հայարեն արձանագրությունը մի գերեզմանաբարու: Հետաքրքրվում են գյուղացիներից և պարզվում է, որ այս քարը շատ ժամանակ չէ, որ գերեզմանատումն է բերված գյուղի մեջ գտնվող ձիթանքից, իսկ ձիթանք էր ընկել մոտեիկ Գառնիոսի տաճարից նկարիչ Մ. Սարյանը երևան վերադարձանարարություն գտնում է հայագիտության մեջ բնակչության մասին տեղեկացնում է ՀՍՍՌ Գիտություն-

ների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի որոշ գիտական աշխատողների, որոնք և զարգվում են այդ արձանագրության վերծանությամբ: Այսպիսով, շնորհած նկարիչ Մ. Սարյանը իր պատմական գյուղատով շնորհակալ գործ կատարեց հայագիտության համար:

Հունարեն այս արձանագրության մասին նախանկան հաղորդում արել է հանգուցյալ պրոֆ. Մ. Դ. Լիսիցյանը՝ Մոլեստական Հայաստան թիերթում (տես 1945 թ. սեպտ. 23-ի համարը):

Այնուհետև այդ արձանագրության վրա կանգ է առել և նրա վերծանությամբ զրադարձ ակարգեմիկոս Հ. Մանանդյանը՝ իր «Դառնի հունարեն արձանագրությունը և Գառնիոսի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը» ուսումնասիրության մեջ:

Այդ արձանագրության վրա կանգ ենք առել նաև մենք մեր մի գորգիկ հողվածում՝ «Դառնի նորագյուղ Հունարեն արձանագրությունը և հայագիտության մեջ»: Նրա նշանակությունը հայագիտության համար խորագրով, որը տալիք է Վերածնունդ թիերթի 1945 թվի դիկտումբերի 6-ի համարում:

Նորագյուղ այս արձանագրությունը փորագրված է բազայտ սալաքարի վրա: Նրա երկարությունն է 1,3 մետր, իսկ լայնությունը՝ 0,6 մետր: Քարի վրա չկան զարդարանգակներ: Արձանագրությունը բարդացած է իննը տողից: Քարի աջ եզրից շատ քիչ չարդված է: Վնասվել է նաև տեքստուրը՝ տողերի աջ ծայրում որոշ տառեր շարդվել են: Սարյանը երկար մնալով շրջի, անձնվել տակ և ենթարկվելով Հոգմանարման, մաշվել է: Որոշ տառեր վատ են երևում:

\*\*\*

Գառնիոսի ամբողջ պատմությունը շատ հին է: Հստ հորենացու մեջ բնած ավանդության՝ այս կառուցել է Գեղամը (Հայկ նա-

հապետի թուան թոռը), իսկ հետո Գեղամի թոռը՝ Գառնիկը վերանվանել է, իր տնօնոյ, Գառնիկ. «Գեղամ... առ ոստամբ նորին լիքինն ի ձորակի միում ամրոց շինէ ձեռակերտ մի և կոչ զանոն նորա Գեղամի, որ յիտոյ ի Գառնիկաւ թուանէ նորա անուանեցաւ Գառնիկ» (Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Ա., գլ. 12):

Պրոֆ. Գ. Լևոնյանը ենթադրում է, որ Գառնիկ անունը ուղարսական շրջանից է գալիս, ինչպես և նախ վերջավորություն ունեցող բոլոր հասուկ անունները — Անի, Արդան, Բժին, Պտղնի և այլն (տե՛ս նրա հոգվածը՝ «Եռորդը պային արքանուու-ի 1940 թ. № 1-ում Գառնիկի հեթանոսական տաճարի առեղծվածը՝ վերջապով):

Գառնիկի բերդաքաղաքի մասին առաջին հավաստի տեղեկությունը մեզ տալիս է առաջին գարդի պատմությունը՝ Տափառուց. Նա պատմում է, որ երբ Հուազամիզզը, վրաց Փարամանի որդին, արշավից Հայաստան՝ խելու հայկական գաճը իր հորեղբարձր Միթրիդատից [նա միաժամանակ և իր աներն էր հանդիսանում], վերջինս փախավ և ամրացավ Գառնիկի ամրոցում. «Հանկարծ ներխուժումը՝ աշաբեկած ու դաշտավայրերից զրկված Միթրիդատին Հուազամիզզը քշեց Գառնիկի ամրոցը (Castelum Gorneas), որի ապահով էր թե՛ տեղադրության և թե՛ հոսմահական պաշտպանության հետևանքով» (Տաշ. Առ., 12, 45; Հմել. Կ. Տակիսոս, Թարգմ. պրոֆ. պաշտոնակատար Սոտնիկյանի, Երևան 1941 թ., էջ 55-57): Այս դեպքը տեղի է ունեցել Արշակոնյաց հարստության Հայաստանում հիմնվելուց առաջ, 51 թվին [տե՛ս այս մասին ակադ. Հ. Մանուկյանի «Ծննդական տեսություն հայ ժողովրդի պատմության», Երևան 1944 թ., էջ 321-322].

Ամենամ հավանականությամբ Գառնիկի ամրոցը հիմնված էր Արտաշիւյան հարստության մկրնական շրջանում, գոյցի և Արտաշատի հետ միասին և ծառայում էր արքայական տան համար նեզ օրվա պատմարն Արտաշատին վտանգ սպառնացը պարագայում արքայական տոռնը, հավանական է, արդարեղ էր ապաստանում: Հիմք կա նաև ենթադրելու, որ Գառնիկի մոտերքում (շատ հավանական է Արդիվանքում) դոնիվիլս է եղել դիցությունը մեկի՝ Անսահոն կամ Աստղիկ աստվածունու փողոքը մեջնոր մեջյանը և այդ մեջյանի հետ են կապված եղել Գեղամի լինեներում գտնված 3-5 մետր երկարությամբ քարի ձուկ հոկաները: [Այս մասին կան մի քանի

հետարքքական սուսմնամարդություններ՝ Հ. Ա. Մարք և Ա. Ա. Սմիրնով, Վաշան, Լեն. 1931 թ., Բ. Բ. Պոտրովսկի, Վաշան, կամունական տարր և յօրք Արմենիա, Լեն., 1939 թ., պրոֆ. Մ. Արեղյան, «Վիշապներ» կոչված կոթողներն իրեն Աստղիկ-Գեղեկությունուն արձանները, Երևան 1941 թ., Այս հարցի վրա կանգ են առել նաև պրոֆ. Մելիքսեհբեկը, ակադ. Մեշշանինովը, «Միասնկով և ուրիշները»]:

Համեմատաբար ավելի ուշ շրջանի կառուցում է ենթադրվել Գառնիկի տաճարը, որի ավերակներում թափված սրբատաշ քարերը զարմացրել են եվլուսպացի շատ ու շատ ճանապարհությունները (Դյուզուա, Քերպարտեր, Մորիկեր, Տելֆեր և ուրիշներ):

Գառնիկի տաճարի կառուցման մասին մեզ տեղեկադրուն է տալիս Խորենացին: Նա պատմում է, որ Տրդատ Մեծը ավարտեց Գառնիկի պարփակությունը և իր բրոց—Խորովիդուսի համար կառուցեց տուն-հովանոց ու իր հիշատակը գրեց հումարին գրերով. «Ձայսուու ժամանակա (325 թ. Արխոտակեսի նիկիալից վերադառնալուց հետո. Ա. Ա.), կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնիու զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթազամ և կապարով մածուցեալ, լորում շինեալ և տուն հովանոց, մահարձանօք, սրանչելի դրօշուածով, բարձր քանդակա, ի համար թեռ իւրոյ Խորովիդուսուտը, և գրեալ ի նման զիշատակ իւր հելլենացի գրովն և Այս ժամանակ [այսինքն, Արխոտակեսի նիկիալի ժողովից վերադառնալուց հետո—325 թ.] վերջանում է Գառնիկի ամրոցի կառուցումը, որը որձաքար և սրբատաշ քարերից էր, նրանք շինեց և տուն հովանոց՝ մահարձաններով, սրանչելի դրվագներով և բարձրագանդակներով իւր բրոց Խորովիդուսի համար և իր հիշատակը գրեց նրա վրա հումարին գրերով (Խորենացի, գլ. 2, էջ 241. տե՛ս 1913 թ. Հրատարակությունը):

Գառնիկի մասին կցկուուր տեղեկություններ են պահպել հնագույն այլ մատենագրների մտուաւ Այսպիս, Փավստոս Բուզանդու Գառնիկի հիշում է Խոսրով Կոտակի (330—349) իր մայրաքաղաքի շուրջն անտառապատելու կապակցությամբ, որի մի ժայրը գալիս համեստ էր մինչև Գառնիկ. և ւ ետ հրաման թագաւորն զօրավարին կրոյ՝ հանել խաչար յաշխարհէն բաղում... և տնիկլ... բերդէն արցունի, որ կաշուն Գառնիկ մինչև ի դաշտն Մեծամօրիւ (տե՛ս Փաւստոսի Բուզանդուց Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1839, էջ 18): Եղիշեն Գառնիկ համարում է բերդաքաղաք:

Հայ հայրենասերները, պատմում է Եղիշեն, պարտիկներից մաքրեցին «զանմատոյց ամուռոն՝ զԴառնի քաղաքն», զԱնդա, զԱրտագերս և զաւանս իրենանց» (Եղիշէ, Պատմութեան Վարդանանց, Տփխիս 1904 թ., էջ 98):

Կիրակոս Գանձակեցու տեղեկությամբ, Գանձիում են թաղված Սոլոմոն (791-792), Գևորգ (877-897) և Մաշտոց (897-898) կաթողիկոսները (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆֆան 1909 թ.): Նույն պատմիւլ հիշում է մատենապիր Հովհաննեա Գալումցում, որի որոշ գործերը հասել են մեզ (տե՛ս էջ 334-342) և այլն: Գառնին հիշում են նաև Միքայել Ասորին, Վարդան Մեծը և ուրիշ պատմագիրներ:

որ նրա ժամանակ դեռևս կանգուն են եղել տաճարի սյուները, աստիճանները և դռները: Ասպարանցին իր այդ տաղում գրում է:

«Մանուկն իմ սէգ արթոն Տրդամ՝ որ անդրանիկն է հաւատիմ»


Գեղեցկագեղն վայր վայելու շինեաց պայման ցանկալիս:

Ամարաբնոյ էր Հովհանոց, զընէր ի սմազիւր արքունիս:

Քսան և շորս սեամբ կառուցեալ նըման զասոց մարգարեիցի:

Ինըն մատամբ աշտիճանաւ ըստ իննեակ զասոցն որ ի լերկինս...

Զերկնա՞նդէտ այս պալատի, հաստաւելոյս կայսեր գահի.



Դառնի. — Հերանոսական աանարի մակետը (վերականգնումը Տարագրութ)

Ուշ շրջանում Գառնիի մասին՝ որպես ամրութ բերդաքաղաքի՝ մեր մատենապության մեջ հաճախ կարելի է հանդիպել, որը սակայն կրկնություն է հին մատենապության: Նա սովորաբար հիշվում է՝ «Հովհանոց Տրդամայ», «Թաղաք Տրդամայ», «Ասրաւոյթ Տրդամայ», «Տրդամակերտ» ձևով:

Միմեռն Ասպարանցու 1593 թվին գրած տաղամափական մի աշխատությունից երևում է,

Զմեկուսացեալս ի բնակչաց, որ և զարդացն է ամայի:

Միայն զքանդուած յինքնան ունի ենթակացեալ կարծըր վիմի:

Երկաթագամ կապարակապ, յորմէ աւսողն զարդուիր...» (տե՛ս Դ. Ալիշան, Այրարանա, էջ 368):

Ենթագրվում է, որ Գառնիի տաճարը վերջնականապես փռւէ Նկել 1679 թվի հանիսի

15-ій, бірін Հայաստանում таңыл **է** «հնեցել ուժի երկրաշրժ» (տես Կ. Կ. Розтанов, Развалины храма Финского типа в Баш-Гарни, тектонический разрыв № 3. В. Шариф 45-мая в гимназії № 11 Кирк-Лула). Сборник статей к сорокалетию научной деятельности Н. Я. Марра «Природы и человека», Москва—Ленинград 1933 г., стр. 649). Ілл. ерկրաշրժի մասին վկայությունը ունի Զաքарիա Սարկաչագը, որն իր պատմության մեջ երկրաշրժից խոսում վեկից ցիների շարքում թվում է նաև Տրդատակերտը (տես Զաքарիայ Սարկաչագի Պատմագրութիւն, Վաղ-պատ 1870 թ. էջ 104).

\*\*\*

Գառնիի ուսումնասիրությամբ շատերն են զբովել, սակայն նրանցից մասնափառական լուրջ ուսումնասիրություններ են հանդիսանում Դ. Ալիշանի, ակադ. Ն. Յ. Մարի, ճարտարապետ Թ. Թորամանյանի, պրոֆ. Գ. Լևոնյանի, պրոֆ. Ս. Լիսիցյանի և ակադ. Հ. Մանուկյանի աշխատությունները։ Անհրաժեշտ են համարում կարծ բերել նշանակած գիտնականների հիմնական եղանակացրությունները Գառնիի ամբողյութեան և տաճարի մասին։

Ալիշանի կարծիքով՝ Գառնիի որպես արքոնի ամրոց, մայրաքաղաքից ոչ այնքան հեռու, Ազատ գետի վրա, վաղուց է կառուցված նրա առաջին կառուցներն են հանդիսացել Հայ Արշակունյաները, բայց տաճարը կառուցել է Տրդատ III-ը (Մեծ Կովկաս), միայն պիտի մուտքի՝ Տրդատ Մեծը կառուցել է թի՝ վերակառուցել։ Չէ՞ յատ և այն եթէ նորոգեամ Տրդատ գտնվեմ, մե՞ն՝ որպէս հաւատագլւնին իմն ցուցանէ Խորենացի, նոր ի նորոյ շինեացը (Դ. Ալիշան, Արտաքար, Վենետիկ 1890 թ., էջ 363).

Ճարտարապետ Թ. Թորամանյանը Տրդատի տաճարի մասին տարբեր կարծիքներ է հայտնել. իր վաղ գրած աշխատությունների մեջ պաշտպանել է այն կարծիքը, որ Գառնիի տաճարը կառուցվել է Տրդատ Յ-րդի կողմից (տես նրա «Եյութեր Հայկական ճարտարապետության պատմության», Երևան 1942 թ., էջ 167, 174), իսկուշ շըշանում գրած ուսումնասիրությունների մեջ գտնում է, որ Գառնիի տաճարը կառուցվել է Տրդատ I-ի կողմից, 66 թվին Տրդատի վերադաշնաւով Հռոմէից, իր հատ բերել է Հռոմէ վարպետներ, որոնք ոչ միայն վերակառուցել են Արտաշատը, այլև կառուցել են նոր շենքեր, որոնց թվում Գառնիի տաճարը. մելքոն եթե շփոթության մի պարագա կա— գրում է նա— այն է՝ թի ո՞ր Տրդատն է շինուու:

Ըստ Մ. Խորենացը՝ Տրդատ Գ-ն է, սակայն պատմական քննադատությամբ ապացուցդ ներ էլ կան, որ Տրդատ Ա-ն է շինած թի՝ ամրոցը և թի՝ հովանոցը 1-ին դարում, Հռոմէից բերած ճարտարապետներով։ և աս, ըստ թիվականին, Հայկական է պետևմ...» (տես ս. Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետություն, Երևան 1942 թ., էջ 282).

Ն. Յ. Մարը Գառնիի գրավիլ է 1909-1910 թվերին Նա ակադ. Յ. Յ. Սմիրնովի հետ միասին պեղումներ է կատարել, հաշվի ու ցուցակագրել է տաճարի թափված բնկորները։ Հնարավորությունը ունենալով մոտիկից ուսումնասիրել Գառնիի տաճարը, նա գրանում է, որ Գառնիի տաճարը «2-3-րդ դարերի հոլմեական կառուցվածք է Հանդիսանուու» (Н. Я. Марр, Հայական և պատմական լուսուր կայություն, ԾՊՀ 1912, ստ. 77)։

Ն. Բոնիփաթյանը քննելով Գառնիի տաճարը կառուցվածքը և ճարտարապետական մի շարք մանրամասնություններ, գալիք է այն եղանակացության, որ տաճարը մեր թվականի առաջին դարից ուշ կառուցված լինել չի կարող (տես Ն. Բոնիփաթյան, Գառնիի հնիքանուական տաճարը, Երևան 1933 թ., էջ 5)։

Հանգուցյալ պրոֆ. Ս. Լիսիցյանի կարծիքով Խորենացին շփոթել է Տրդատի հրին. Գառնիի տաճարը կառուցը Տրդատը ո՞չ թի երրորդ Տրդատն է, այլ առաջինը: Ալ. Խորենացին, — գրում է նա, — որը երեսի ինքնամբ տեղում կարդացել է արձանագրությունը, սխալմամբ վերագրել է Տրդատ Յ-րդին և այդ պատճառով լրացրել է արձանագրությունը Խորորդիդուխտ անունով, որը բարքի մեջ չկան (տես ս. Շովեմական Հայաստան 1945 թ., մեջ. 28-ի համարը):

Արվեստի վաստակավոր գործիք պրոֆ. Գ. Լևոնյանը Գառնիի մասին գրել է փորդիկ, բայց արժեքավոր մի ուսումնասիրություն ձևորդը պահպանին արվեստու-ի 1940 թվի առաջին համարում. Նա գտնում է, որ Տրդատ Յ-րդը ո՞չ թի կառուցել, այլ մերանորդգել է Գառնիի տաճարը 325 թվին, իսկ բայց տաճարը, որը ըստման հոգով է, կառուցվել է Արտաշեսյան ճարտարապետին շրջանում և շատ հավանական է Տիգրան Մեծի կողմից: Նա առաջին ամփամ հարցի ուսումնասիրության պատմության մեջ բերում է օհակաց գրքի Գիշատակարանի այն տեղեկաւուունը, որը վկայում է Տրդատի կողմից վերակառուցման մասին (Գ. Լևոնյան, Գառնիի հնագուշական տաճարը առեղջալածը, տես ս. Շովեմական Հայաստան 1940 թ. № 1, էջ 44-47):

Ճարտարապետ Ն. Մ. Տոկարսկին իր

«Архитектура древней Армении»,  
աշխատովյան մեջ Գառնիի  
տաճարի կառուցումը վերա-  
դրում է Տրդատ առաջինին,  
նրա կարծիքով, Տրդատ առա-  
շինը ներուի մոտից վերագու-  
նալով, իտալական ու տեղա-  
կան վարպետների միջոցով՝  
Արտաշատը վերականգնելու  
հետ միասին ձեռնարկեց նաև  
Գառնիի տաճարի կառուցումը  
(տես Հ. Մ. Токарский, архитек-  
тура древней Армении, Ереван  
1946 г., стр. 15 и 344):

Եղ վերապես, ակադ. Հ.  
Մանանցանն իր «Գառնիի հու-  
նարկն արձանագրությունը» և  
Գառնիի «Կեթանոսական տա-  
ճարի կառուցման ժամանակը»  
վերնագիրը կրող արժեքավոր  
աշխատովյան մեջ գտնում է,  
որ նորագյուտ արձանագրու-  
թյան հունարկն տերսահ ըն-  
թերցումից կարելի է համոզ-  
փած պնդել, որ Տրդատ Յ-րդը  
Գառնիի տաճարը ո՞չ թե կա-  
ռուցել, այլ վերակառուցնել է:  
Եղ տաճարը, նրա կարծիքով,  
կառուցված պիտի լինի Արտա-  
շեսան, կամ նրան նախորդող  
Երվանդյան շրջանում։ «Շատ  
պարզ է, ինչպիսի, — գրում է  
նա, — որ Գառնիի մոնումեն-  
տակ հուշարձանների կառու-  
ցումը միանգամայն անհա-  
վանական կլիներ են բնադրել

օտարազգի թագավորների անկայուն իշխա-  
նության ժամանակ Հայաստանում (առաջին  
դարի առաջին կիսում մեր թվ. հետո) և կամ  
Արտաշեսյան թագավորության խոռվանուց  
և երեքուժ շրջանում (առաջին դարի կրկնորդ  
կիսում մեր թվ. ա). Խեկ եթե այդ այլպես  
է, ուրեմն, ամենի քան համական կարմիր  
է համարել, որ Գառնիի վերոհիշյալ կա-  
ռուցվածքները ոչ մի կապ չունեն հոսումնա-  
կան ճարտարապետության և հոսումնական  
արվածափառ հետ, նրանք, հավանդին, Հայաս-  
տան մուտք գործած հելենիստական կուլ-  
տուրայի մի մնացորդ են և վերագրվելու են  
կամ առաջին Արտաշեսյանների և կամ Եր-  
վանդյանների թագավորության ժամանակա-  
շրջանին (էջ 20):

Անհրաժեշտ է նշել, որ Հայագիտության  
մեջ աւարբեր կարծիքներ են Հայտնվել նաև  
Գառնիի տաճար Հովհանոսյանի մասին։ Ի՞նչ  
շենք է հանդիսացնել նաև Ուստամնասիրողնե-



Գառնի. — Ներանոսական տաճարի ավերակների  
մեջացողդները. խոյակ

րի մի մասը (ակադ. Մառ, պրոֆ. Լիսից-  
յան, պրոֆ. Լևոնյան և ուրիշները) այդ  
շենքը համարել են տաճար, իսկ մյուս մա-  
սը (Էմին, Խորեն Ստեփանե և ուրիշները)  
ամբողջությունը, «ապարանք», թորամանյանի  
կարծիքով, «հովանոցը» ապարանքի մաս  
կազմող շենքիցից է, ունձ կրվի, — գրում է  
նա, — թե հովանոցները, եթե ընդհանուրպես  
ապարանքի մոտը կամ հեռուն անշատ կշին-  
վին, այնուամենայնիվ, երբեմն անորոշ  
ակնարկներ կան, որ կարծել կուտան, թե  
ապարանքի շենքերու որևէ մասերու վրա  
հովանոցներ շինված են («Նյութեր հայկա-  
կան ճարտարապետության պատմության»,  
Երևան 1942 թ., էջ 357):

Սակայն ճարտարապետության պատմու-  
թյան մասնակիությունիքը մեծ մասը մի հարցում  
համամիտ են, որ Գառնիի տաճարն իր կա-  
ռուցվածքով հելենիսկան շրջանին պատկա-  
նող շենք է Օգոստոսյան շրջանում և նրա-

ΗΛΙΟΣ ΤΗΣ ΜΕΓΑΛΗΣ ΑΡΧΗΣ ΝΙΑ ΚΑΝΑ  
 Ή ΣΔΕΣ ΠΟΤΗΣ ΑΙΚΤΙ ΣΕΝΑΙ  
 ΒΑΣΙΛΙΣ ΣΑΤ ΟΝΑΝΙΚΗ ΤΩΝ ΚΑΣ  
 ΛΙΤΟΥ Υ · ΑΙ · ΤΗ Σ ΒΑΣΙΛΕΙ  
 ΜΕΛΕΑ ΣΥ ΤΟΞΟΥ ΣΙΑ ΣΤΕΙΑ  
 ΛΙΤΟΥ Υ ΓΟΣ ΤΩΣ Ι Ε ΓΑΛ Η Σ  
 ΜΕΓΑΛΑ ΜΑΤΗ Ι Σ ΚΑΙ Ε Υ Χ Α  
 ΤΟΥ ΜΑΡΤΥΡΙΟΥ

Գառնի ճարապուտ արձանագրության ընթօհնակամբ

նից հետո Հռոմում ըստունված չէր հունական ձևի տաճարները շինել, իսկ Գանդիի տաճարը հունական ձևի է: Հռոմեական տաճարները ուղղակի կանքին ենում էին գետնի վրա և նրանք ունենաւ էին երկու աստիճան մուտքի կողմից, մինչդեռ համական տաճարներու ունենում էին 5-7 աստիճաններ ամբողջ շրջապատվ, ինչպես Գանդիի տաճարն է: Հռոմի տաճարները ունենում էին մի գլխավոր ֆասադ դեպի Փորումը, մինչդեռ հունական տաճարները չորս կողմից սրբազնարդ էին, ինչպես Գանդիի տաճարը:

Հայագիտության մեջ գոյություն ունեցող այս վեճերը, մեր կարծիքով, մասսամբ լուծում է նորագույան արձանագրությունը՝ Պետք է ասել, որ արձանագրության դրութիւն շատ շատ արագ, 1940 թվին, պրոֆ. Գ. Լևոնյանն, իր Գանդիին նովրաված վերը հիշված հովածում, պաշտպանելով Խորենացուն անտեղի դատապարտություններից, միանգաման իրավացի նկատել է. «Պրոֆ. Մայի Գանդիում արած պեղությունը երևան և կան որդաքար և կոփլած պատճեն, երկաթպամ և կապարում ամրացված, սքանչիլ դրաշմաններով և բարձրաբանվածներով»: Զի զանկի միայն հունարեն արձանագրությունը, որը եթե մի օր երևան գա, լիովին պետք է պարզ այս կնճիռը և դա անհավանական չ» (էջ 45):

Անհրաժեշտ ենք համարում նաև բերել սարքարի արձանագրության ընդորինակությունն առանց որևէ փոփոխության, ի դեպ, պարտը ենք համարում հայտնել, որ մենք եղել ենք Գանդիում, անձամբ, մեծ ուշադրությամբ ընդորինակել ենք արձանա-

գրության տեքստը և ստուգիած այդ ընազգի հիման վրա կատարել թարգմանությունը:  
66-րդ էջում զետեղված տեքստը պրոֆեսոր Ստ. Լիսիցյանը վերծանել և թարգմանել է հետևյալ ձևով. «Արև Տրդատես Մեծ Արմենիայի անարժան պետ [ոգեսպոտ], բացարձակ տեր】 կառուցեց տում [տաճար] թագումը համար՝ անպարտիվ [հոգը] և հարազատ եղարոր կողմից՝ վեր Մեծ թագավորական ապարանքից, ստովածների հովանու ներքո, աշխարհիկ [քաղաքակենցաղ], աղոթքն ուղղող մեծ քարայրին [ապա ամափմու] բառն, որը անձնութ է ինձ, անշոշտ ածակամ է» և զվարճագրու. («Սովորական Հայաստան» 1945 թ. սեպ. 23-ը համարը):

Բավականաշատի տարբեր է վերծանում և թարգմանում ակադ. Հ. Մանանդյանը. «Էլիոս (Տիրագաւոր թագավոր) Մեծ Արմենիայի իշխանության որպես գերազություն տեր վերստին կառուցեց տաճարը արգաւադատումը (համար) ամհամբեկն ընդուն իր ի ինքոր թագումը մեծանութեան հովանու շնչի աղոթով մեծն սրբին (?) երգի թող խորհն և գոհության ավետարանման (համար)» («Գանդիի հունարեն արձանագրությունը...», էջ 5):

Խոչին պրոֆ. Ս. Լիսիցյանը, ամնախ և ակադ. Հ. Մանանդյանը, որոնք մեր լավագույն հունագետներն են, մեր կարծիքով, ձեռքի տակ շնչ ունեցնել արձանագրության հարազատ ընդորինակությունը, իսկ ըստանկարի հիման վրա զժվար է ճիշտ վերծանել, որովհետև փորագրված տառերը շատ վատ են երևում: Անհրաժեշտ ենք համարում բերել մեր վերծանությունը:

### “Էլիոս Տիրաձետ” [ծ մեջա]

μεγάλης Ἀρμενίας ἀνα[κτος]  
ώς δεσπότης. Αἴκτισε ναι[διον]  
βασιλίσ[σ]α τὸν ἀνίκητον κασ[ιν ἐγι]-  
ατόν. Αἱ. Τῆς βασιλεί[ας αὐτού]  
μεγαλείας]. Τὸν ἔξουσιόν στεγάνον  
λίτουργος τῷ μεγάλῳ σπ[η]ι εὐχεσθε  
μετὰ ματήμι καὶ ευχαρ [ιστίαν εὐχὴν]  
τοῦ μαρτυρίου.

Մեր վերծանած տեքստը թարգմանում ենք հետևյալ ձևով.—

«Արեգակնակիայլ Տրդատ Մեծ,  
Մեծ Հայրի թագավոր  
որպես դեսպոտ, կառուցեց տաճար  
թագավորադատում [հիշատակին] Անպարտելի եղայրը  
տասն և մեկերորդ տարին իր գահակալության  
մեծաշուրթ: Տան հովանոցի տակ  
աղոթողը առ մեծ քարայրին թող աղոթք մատուցան:

Հետո որո և ցանկալ բարեմաղթություն աղոթք  
նահատակի [Հիշատակին]:

Անհրաժեշտ ենք համարում որոշ ծանոթություն տալ հունարեն տեքստի առանձին բառերի մասին:

1. "Ալուս—մենք թարգմանել ենք աչք բների տարեց, ինչպես ակադ. Մանանդյանի և պրոֆ. Լիսիցյանի մոտ է, այլ արեգանափայլը՝ այլ բառի թարգմանությունը մեր առաջարկած ձևով կա բառարանում (տես A. O. Постишиль, Греческо-русский словарь, Киев 1890г., էջ 409):

2. Տրιδάտեց—ուշադրության արժանի է, որ նորացյոււմ արձանագրության գործառում այս ձևով է և ոչ Ազաթանգեղուսի հունարեն թարգմանության Դրիձատեց ձևով (տես Agathangelus und die Akten Gregor von Agmenien, Ιωακηράφ հրատ. 1887թ.) Տրդատի անվան ներկա ձևը համապատասխանում է Բաշ-Ազաթանգեղուսի հունընթաց արձանագրության մեջ եղած ձևին (տես Ростовцев, Апапанская греческая надпись Тиридата, СПБ 1946թ., էջ 5):

3. Առաջին տողի վերջից ջարդված տարածության վրա աեղավորված է եղել մեր հաշվով վեց կամ յոթ տառից կազմված մի բառ: Մեր կարծիքով, այդ բառը եղել է և թե Յասլենց, ինչպես ակադ. Հ. Մանանդյանի մոտ է, այլ ճ միշտ, ինչպես Տրդատի Բաշ-Ազաթանի արձանագրության մեջ է (տես էջ 5): Յասլենց լինել չի կարող այս պատճառով, որ նախադասության մեջ, քիչ հնուո, գործ է ածել այց բառը, որը համարու է բաղկանին:

4. Մեցալեց՝ Արմենիաց—այս կարող է՝ լինել հոդով, ինչպես օրինակ Ազաթանգեղուսի հունարեն թարգմանության մեջ է Դրիձատեց Յասլենց դեց մեցալեց՝ Արմենիաց (էջ 30, 53) և առանց հոդի, ինչպես Տրդատի Բաշ-Ազաթանի արձանագրության մեջ է՝ Տրիձատեց ճ մեցաց մեցալեց՝ Արմենիաց (էջ 6), Մեր ներկա արձանագրության մեջ գործ է ածված երկրորդ ձևով:

5. Երրորդ տողի վերջին բառը թերի է մատցել, միայն երեք տառ է, երկում՝ այսու: Պրոֆ. Ա. Լիսիցյանը լրացնում է այս ձաւը [էլլաս] ձևով, թարգմանելով շանարժանաւում: Այս վերջանումն անհաջող է, նաև

որովհետև ձաւը [էլլաս] մակրայ է և նշանակում է տանարժանորեն (գոյականը կինք ձնաչու): և ապա Տրդատը, որ անվանում է իրեն գեսպոտ, «անարժան» չէր անվանիր: Ակադ. Հ. Մանանդյանը վերծանում է ձնաչուաց ձն և թարգմանում, «իշխանով որպես»: Մենք կարծում ենք, որ ձնաչու կինք նիշտու ծնակության մեջ է առաջարկում և ոչ անաշտու ծնակության մեջ առաջարկում է առաջարկության մեջ և առաջարկության չափ է:

6. ծեսունեց—պրոֆ. Ա. Լիսիցյանը թարգմանում է «պետ» («բացարձակ տեր») ձևով, իսկ ակադ. Հ. Մանանդյանը՝ «զերագույն տեր»: Մեր կարծիքով, այդ բառը կարելի է ողեսպոտ ձևով թողնել, որովհետև մեր լեզվի մեջ նա ճիշտ արտահայտությամբ քաղաքացիություն է ստացել: Թարգմանելու դեպքում, մեր կարծիքով, հարմար է ուժիապետ բառը:

7. ալեւտօց—ընագրում պարզ երևում է ալեւտօց ձևով, իսկ նման բառ հունարենի բառարանում մենք չկանոնք: Պրոֆ. Ա. Լիսիցյանն ուղղում է հետու ձևով: Հ. Մանանդյանը առաջարկում է ան հետու որ նշանակում է վերանորոգեց, «վերսուին կառուցեց»: Ճիշտը մեր կարծիքով, հետու է, Բայց թե ինչու ալեւտօց ձևով է՝ այդ կարծում ենք, բարբառային ձև է: Ի դեպք ընագրային նման կարգի տարբերակ նկատել է և նուստովելու Տրդատի Բաշ-Ազաթանի արձանագրության մեջ Անհաջող է պրոֆ. Ա. Լիսիցյանի այս էլեւտօց ձևը կապիլունը երբեք երկարացման նշան (պերիսպունոն), և այն էլ երբորդ վանկում վերջից՝ ընդունել չի կարող նա կարող է միայն շեշտ վերցնել (ակուտ):

8. գալծիոց—պրոֆ. Ա. Լիսիցյանը՝ ակադ. Հ. Մանանդյանը վերծանում են ցանք ձևով և թարգմանում տաճարը: Բայց արձանագրության վերջին տառը շատ պարզ երկում է (եռուս) ձևով, ուստի և մենք առաջարկում ենք ցանք, որը դար-

ձյալ «տաճար» նշանակությունն ունի  
(*Das Griechisch-deutsches Wörterbuch von K. Jakobik und E. Seiler, Leipzig 1884 թ.,*  
p. 1170):

10. Φραφ. Ο. Ικινηγιανή μωνε ρύνω-  
χρή ανίκητον κάσιν-ηθη μωνεδ ηρφωδ τόν  
ηοηρη δηνερη ή ρύνκελ, μωνερη ρύναρηρηλ ικη  
κι ρωνε ωμαρη ικηκειηλ ή, κι ψηφοτη ηηκελ

11. ἀγίκητον—ἴωθιοντες ήρκου πιπουτα-  
\_νασικροπηνέρην έτι διχωτηνήν φέρδωνται ή  
\_θωρημάντει ειναιφαρτεΐτη ειπωτής.

ἀγίκητον καπέρητον, αἱ τι կերպ լինել չի  
կարող: Սակայն մենք առաջարկում ենք  
վերծանության միանդամայն այլ եղանակ  
— քա՞նի՞ կարդալով այդ հասկածը ուն  
անկետոն քանի «անպարտելի եղանակ»:

14. Արդ բարին հաջորդում է կետերի մեջ առաջ, աւ.՝ Մեր կարծիքով այդ թվական է և համապատասխանում է մեր գրաբի մետասանին (11), որ նախորդ բարի հետ միասին կարելի է թարգմանել «ամին մետասանի»:

15. Βασιλείας — αἱρατ. Ζ. ὑπάνωνται  
γιανός καὶ ψηφοφ. Ιερούγειαν εἰς φέρδωντες οὐκ  
Βασιλείας: ἀλλοι, πρὸς ἡγεμονίαν τοῦτον ή  
τοις θραυσθεῖσιν αἴσιαν ηγεμονίαν, τοις  
δικαιωτούσιαν διασκέψονται καὶ εἰρήνη  
φέρδωντες Βασιλείας.

16. βασιλέας ρωπήց հետո մենք են-  
թաղում ենք, որ պիտի եղած լինի այսօն,

որ ունի սիրա գերանվան իմաստը: Նախորդ բառի հետ ստացվում է սիր թագավորության տասնեւեկ տարին:

17. ԱՅ[շալ] Ա[քա]— երկու նախորդ վերծանողներն էլ ճիշտ են վերծանել և թարգմանել «մեծաշուրջ» բառով Գրիբեժ չի երեփում միշի յաձ տառերը, որոնք ճիշտ լրացված են նախորդ վերծանողների կողմբց:

18. Ոոծ ճշումնեա— ճիշտ է վերծանված ակադ. Հ. Մանանդյանի մաս—«իշխանության», «նովանու տակի»: Պրոֆ. Ս. Լիսիցյանի ծոյնունությանը ամսապատճերին ձեւ չնայած ավելի համապատասխանում է մտքին, բայց չի ստուգվում բնագրով: Բնագրի այս մասը շատ պարզ է երկում և կատածանի տեղիք տալ չի կարող:

19. ՌԵՎԱՐԴԱՆԱԿԱՆ ՌԵՎԱՐԴԱՆԱԿԱՆ ԱԿԱԴ.՝ պրոֆ. Ս. Լիսիցյանի ձտէւաց ձեր չի ճշտվում:

20. ԼԻՏՈՒՐԳՈՅ—մեր կարծիքով, ճիշտ է թարգմանել ակադ. Հ. Մանանդյանը, «աղոթող» և ոչ «աղոթքն ուղղող», ինչպես պրոֆ. Ս. Լիսիցյանի վերծանությունն է:

21. Յոթեմորդ տողի վերջին բառից մասցել է միայն երկու տառ, որից առաջինը պարզ երկում է որ Ծ-է, իսկ մյուսը՝ Պ կամ ։: Պրոֆ. Ս. Լիսիցյանը վերծանում է Ծ(Շ)-«Քարայրին», իսկ ակադ. Հ. Մանանդյանը՝ «Ծաղկություն»: Սրբին լինել չի կարող, մեր կարծիքով, եթե միներ որքին, պիտի լիներ և սրբի անունը, Սեղ ավելի հավանական պրոֆ. Լիսիցյանի վերծանությունն է երկում, Խոսքը, մեր կարծիքով, Այրիվանցքին է վերաբերվում, որի քարայրները հնեանոսական կարևոր սըրբավայրեր էին:

22. ՌԵՎԱՐԴԱՆԱԿԱՆ ԱԿԱԴ.՝ ջարդված պիտի լինի ընչօծե-ւաղթեցեց իմաստով:

23. ԱՅՃԱ—ութերորդ տողի առաջին բառն է սա Ճիշտ է վերծանում պրոֆ. Ս. Լիսիցյանը, միայն նա հնեադրում է, որ այդ բառն ավելացված է հետագա շրջանում: Զի ստուգված ակադ. Հ. Մանանդյանի առաջարկած ԱՅՃԱ ձեր մեր վերծանությունը չի էլեկտրական գործառական առաջարկած պրոֆ. Լիսիցյանն ուղղում է ասել Ձօսու: Սակայն բնագրում այդ ուղղումները չեն ճշտվում:

իմաստով, Բնագրում շատ պարզ, երեսմ է բայց:

24. ԱՅՃԱ—պրոֆ. Ս. Լիսիցյանը վերծանել է պաշտօն ձեռվ և չի թարգմանել՝ տալով փոքրիկ ծանոթություն այն ժամանակ, որ այդ բառն անծանօթ է և չի համացվում նրա իմաստը, իսկ ակադ. Հ. Մանանդյանը վերծանել է պաշտօն ձեռվ և թարգմանել՝ «Թող նորին» (այսինքն, նախորդ բառի հետ միասին՝ «երգեր թող նորին»): Բայց բնագրում պարզ արեւում է որ փոքրգրած է, պաշտօն որը նշանակում է «ցանկաւ», «բարեմատիթել», Մեր թարգմանության սեղ հարմար ենք համարել ընտրել երկրորդ ձեռվ:

25. ԿՅ ԵՎՀԱՐԴ[ՏԵՏԱԿ]— պրոֆ. Ս. Լիսիցյանը վերծանում է նոմենատիվուում ԵՎՀԱՐԴ[ՏԵՏԱԿ]—բայց պիտի լինի ակուզաաի-կուու-ԵՎՀԱՐԴ[ՏԵՏԱԿ], որն ունի գործություն, շշորհակալություն, բարի վայելչություն իմաստը:

26. ԿԱՐԺՈՒՄ ԵՆՔ ՆԱԽԱՎԱԲՐՋԻՆ ՏՈՂԻ ՎԵՐՋԻ ՋԱՐՋՎԵԼ Է ԵՆԹԱԿԱՆ, ՈՐԻՆ ԱՎԻԵԼ է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՎՀԱՐԴ:

27. ՏԾ ՄԱՐԽՈՒԾ-ԱԿԱԴ. Հ. Մանանդյանը թարգմանում է «ավելաբանման» (համարեց), իսկ պրոֆ. Լիսիցյանը թարգմանում է «վկայաբանին»: Մեր կարծիքով, խոսքը վերաբերում է կոնկրետ հուշարձանին, վկայաբանին և, մեր կարծիքով, այդ բառի ցենտրուսն է:

28. Պրոֆ. Լիսիցյանը գտնում է, որ արձանագրության վրա երկու ձեռվ է աշխատել: Մեզ ևս հավանական է երկում այդ: Այդ կողմէի կարգվածքը դիամիլորյալ կոտրվածք է և վերջին երկու տաղը ուշ շրջանում են ավելացված: Այդ երկում է պակեղբարփիկ ուսումնասիրությամբ՝ Ե-ի ձեր, առաերի մանրությունը և այլն:

29. Պրոֆ. Ս. Լիսիցյանը հունարեն արձանագրության տեքստում մատնացուց է անում նախկին փոքրագրված տեքստում երկու բառի ուղղում անհույսն ներկայացնելու համարական է վերջին բառը գրական սիսակ է, պրոֆ. Լիսիցյանն ուղղում է ասել Ձօսու: Սակայն բնագրում այդ ուղղումները չեն ճշտվում:

Ի՞նչ հիմնական եզրակացության կարող ենք համգել նորագույն այս արձանագրության վերծանությունից:

1. Մեզ հասած հումարին այս արձանագրությունը Գառնիի տաճարի կառուցման առթիվ գրված արձանագրությունն է: Տարօդինակ է միայն, որ նա գեղեցիկ փորագրված չէ:

2. Գառնիի հումարին այս արձանագրությունը—կործնացու հիշած արձանագրությունն է, որը բայց նրա տեղեկության, փորագրել է տվել Տրդատ Մեծը (Յ-ըդը) ի հիշատակ քրոջը, Խոսրովիդուսիուի: Պատմահայրն ինքը է կարդացած և կարդացած է այս արձանագրությունը, այլապես նրա հայորդած տեղեկությունը չէր կարծի այդքան տառացի համընկեր արձանագրության բովանդակության հետ:

3. Գառնիի տաճարը կառուցողը համեմուացել է ոչ թե Տրդատ երրորդը, քրիստոնյա, այլ Տրդատ առաջինը: Այդ այժմ՝ համոզված կարելի է ասել: Տաճարի կառուցման թվականն է համեմուացել մեր էրայի 77 թվականը: Հունատառ արձանագրության պալեոդրաֆիկ ուսումնասիրությունը ևս մեր հունը է տախիս արձանագրությունը համարել Տրդատ առաջինի ժամանակաշրջանի արձանագրությունը, բայց Տրդատ երրորդի՝ Քարդհայտելինի (*Griechische Palaeographie*) աշխատության հավելածուն բերլած զանազան ժամանակների հունարին տառաձելերից մեր արձանագրության տառաձելերին ափելի են համապատասխանում առաջին ալյուսակի տառերորդ տառաշարքի առաջին սրբնյակին, որի վրա նշանակրած է 79 թիվ ն. ք. մեր թվարկության (տես «*Gard-*

*hausen, Griechische Palaeographie*, Leipzig 1913»):

4. Միանգամայն անհիմն է Գառնիի տաճարը բազարացիական շենք—«ամսանոց» կամ «ապարանք» համարելու: Նա, հաստատավաս կարելի է ասել, հանդիսացել է տաճարը, Շամ հավանական է, որ այդ տաճարը նվիրված է եղել Անահիտին կամ Աստդիկին: Քարանձավը, որին խնդրվում է աղօթել, հեթանոսական կարելու մեջաններից մնկն է համեմուացել, և մեր կարծիքով, նրա հետ է կապված Գնդամա լեռների ձուկ-և կամսերի պաշտամունքը:

5. Պրոֆ. Ս. կիսեցյանի հնիագրությունը, որ երկու ձեռք է աշխատել արձանագրությունը, այլապես նրա հայորդած է: Տարբերությունն նկատված է տաճարի միջև (կան ուղղագիծ և բոլորած տառեր):

6. Գառնիի նորագույն արձանագրության տառաձելերը համեմատելով Բաշ-Ապարանում գտնված Տրդատի արձանագրության տառաձելերի հետ, մենք գտնիս ենք այն եզրակացության, որ երկու տեքստերն են պատկանում են միննույն փորագրության պահին որ, Ռուսուցին ամեր կուռուզը, որ մամանակի ընթացքում Հայաստանում, հավանական է կպանվին հունարին էպիգրաֆիկ տեքստեր, որոնց և կօգննեն թերթականապես ջշտելու Բաշ-Գառնիի արձանագրության որ Տրդատին պատկանելու: առեղծվածը, հարավոր է այժմ: Մեր ձեռքի տակ եղած Տրդատի նրկորդը արձանագրությունը հիմք է տալիս հաստատման ասել, որ Բաշ-Ապարանում Տրդատի մետանով գտնված արձանագրությունը ևս Տրդատ առաջինին է, հայ Արշակունյաց հարստության հիմնադրի Տրդատինը:

## Ց Ա Կ

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐԵՐԻ ԵՎ ԳԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ

#### ա) ԱՐՅՈՒՐՈՒԹՅՈՒՆ

- Արքաթեակեդայ Պատմութիւն Հայոց, պահատ. Գ. Տ. Մկրտչեանի և Ս. Կանայեանի, Տփդի 1909 թ.:
- Agathangelus und die Akten Gregor von Armenien, Լագարդի հրատ. 1857 թ.:
- Եղիշէի Պատմութիւն Վարդանանց, Տփթի 1904 թ.:
- Զաքարիա Սարկասակի Պատմութիւն, Վաղարշապատ 1870 թ.:
- Էտաց գրքի հշատակարանը (ան և Աբրամատ 1898 թ. № 1):
- Կիրակոսի Գանձակեցու Պատմութիւն Հայոց, Թիֆլիս 1909 թ.:
- Մովսէսի Խորենացու Պատմութիւն Հայոց, Տփդի 1913 թ.:
- Taciti Annalium, լատիներենից թարգմ. պրոֆ. պատուակատար Պ. Սոտնիկյանի, Երևան 1941 թ.:
- Փատմուի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ 1932 թ.:
- բ) ԳԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
- Մ. Արեգյան, Վշապեսի կուլած կոթողերի իրեւ Առաջիկ-Դերկետ գիցունու արձաներ, Երևան 1941 թ.:

2. Ա. Աբրահամյան, Գառնիի նորագույս հունար և արձանագրությունը և նրա նշանակությունը հայացքատիպյան համար (տես «Վերաֆեռնեղ» թիրթի 1945 թ. գեկտեմբեր, 6-ի համարը);
3. Զ. Ալիշան, Ալրարատ, Վենետիկ 1890 թ.;
4. Ն. Բուհամբյան, Գառնիի հեթանոսական տաճար, Երևան 1933 թ.;
5. V. Garthausen, Griechische Palaeographie, Leipzig 1913;
6. Griechisch-deutsches Wörterbuch von K. Jacobik und E. Seiler, Leipzig 1884;
7. Թ. Թորամանյան, Հայկական նարտարապետություն, Երևան 1942 թ.;
8. Թ. Թորամանյան, Ալութեր Հայկական ձարտութափեան պատմության Երևան 1942 թ.;
9. Գ. Լևնյան, Գառնիի հեթանոսական տաճարի տողեզվածք (տես «Էլորհրդակն արվեստ» 1940 թ. № 1);
10. Ա. Լիսիցյան, Գառնիի տաճարի հունարեն արձանագրությունը (տես «Սովորական Հայուստան» 1945 թ. սեպտ. 23-ի համարը);
11. Հ. Մանանյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան 1946 թ.;
12. Հ. Մանանյան, Քենաչան տեսություն Հայ ժողովրդի պատմության, Երևան 1944 թ.;
13. Н. Я. Марр, Кавказ и памятники духовной культуры, СПБ 1912 г.;
14. Н. Я. Марр и Я. И. Смирнов, Вишапы, Ленинград 1931 г.;
15. В. Б. Пшетровский, Вишапы, каменные статуи в городах Армении, Ленинград 1939 г.;
16. А. О. Посининиль, Греческо-русский словарь Киев 1890 г.;
17. К. К. Романов, Развалины храма римского типа в Баш-Гарин («Сборник статей к сорокалетию научной деятельности Н. М. Марра», Москва—Ленинград, 1933 г.);
18. М. Ростовцев, Апаранская греческая надпись царя Тиридата, Москва 1911 г.;
19. Н. М. Токарский, Архитектура древней Армении, Ереван, 1946 г.;

